

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2014 թ. հունվարի 30-ի թիվ 4 նիստում

Գիտ նախագահ, ռեկտոր՝ _____ Ա. Մինոնյան

ԵՊՀ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

<p style="text-align: center;">Խնդրի ընկալումը</p> <p>(համառոտ ներկայացնել, թե ինչպես է ԵՊՀ-ն ընկալում սվ-յալ չափանիշի շրջանակներում բարձրացված խնդիրների էությունը, ինչպիսի մոտեցումներ կամ մեթոդներ է պատաստվում կիրառել դրանց լուծման համար, ինչպիսի իրավիճակ կամ գործալ արդյունքներ է ակնկալում դրանց լուծման արդյունքում)</p>	<p>Այս ոլորտում բացահայտված հիմնախնդիրների լուծման նպատակով նախատեսվում է մշակել և ընդունել ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր (ՌԾ), որում ԵՊՀ առաքելությունը կվերաձևակերպվի նոր իրավիճակներից բխող պահանջներին համապատասխան: Նոր ՌԾ-ում կներառվեն նաև ռազմավարական նպատակների ձեռքբերման քանակական և որակական ցուցիչներ, որոնք ՌԾ-ն կդարձնեն ավելի հստակ և կուղղորդեն նպատակների իրականացմանը միտված գործողությունները: Նոր ՌԾ-ում կարևորագույն խնդիր է լինելու ԵՊՀ կառավարման մարմիններում, համահամալսարանական և ֆակուլտետային հանձնաժողովներում և հանձնախմբերում շահակիցների (հատկապես արտաքին) ներգրավվածության ընդլայնումը:</p> <p>Ակնկալվում է, որ ԵՊՀ զարգացման ռազմավարական նոր ծրագիրը կպարունակի ԵՊՀ հստակեցված առաքելությունը, առաջընթացի գնահատման քանակական և որակական ցուցիչներ, ինչպես նաև կնախատեսի կառավարման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ընդլայնված և գործուն մասնակցություն:</p>
---	---

Փորձագիտական երաշխավորություն	Խնդրի ընթացիկ վիճակը	Բարելավող գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական և ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
1. Վերաձևակերպել առաքելությունը և ակնկալվող վերջնարդյունքների մակարդակում ավելի հստակ դարձնել:	ԵՊՀ առաքելությունը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ («Կրթության մասին» ՀՀ օրենք), ԵՊՀ կանոնադրությամբ և ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով (ՌԾ):	1. Ձևավորել ԵՊՀ զարգացման ռազմավարական պլանավորման հանձնախումբ (ՋՌՊՀ):	2014/15 ուստ. I կիս.	ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան	ԵՊՀ ՋՌՊՀ	Հրամանագրված ՋՌՊՀ և հաստատված աշխատանքային պլան-ժամանակացույց
		2. Իրականացնել ԵՊՀ ներքին և արտաքին միջավայրային վերլուծություններ համալսարանի SWOT-ի կառուցման նպատակով:	2014/15 ուստ. I կիս.	ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան	ԵՊՀ ՋՌՊՀ	SWOT վերլուծության զեկույց
		3. Մշակել և ընդունել ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր՝ ԵՊՀ հստակեց-	2014/15 ուստ.	ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան	ԵՊՀ ՋՌՊՀ	ԵՊՀ խորհրդի կողմից

		ված առաքելությամբ:	II կիս.- 2015/16 ուստ. I կիս.			հաստատված՝ 2016-2020 թթ. ՌԾ
2. Ռազմավարական պլանում ներառել ռազմավարական նպատակների ձեռքբերման գնահատման ցուցիչներ, որոնք ռազմավարական պլանն ավելի հստակ կդարձնեն, իսկ նպատակների իրականացմանը միտված հաջորդ գործողությունները՝ հնարավոր:	ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ՌԾ-ն ռազմավարական երեք նպատակներից յուրաքանչյուրին հասնելու համար սահմանել է համապատասխան խնդիրները և մշակել է դրանք լուծելու կոնկրետ ռազմավարությունները (գործողություններ, միջոցառումներ, նախագծեր և այլն):	1. ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ՌԾ-ում նախատեսել առաջընթացի գնահատման քանակական և որակական ցուցիչներ՝ յուրաքանչյուր նպատակի ձեռքբերումը չափելու համար:	2015/16 ուստ. I կիս.	ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան	ԵՊՀ ԶՌՊՀ	ԵՊՀ նոր ՌԾ՝ առաջընթացի գնահատման հստակ ցուցիչներով
3. Բարելավել շահակիցների (հատկապես արտաքին) ներգրավվածությունը: Վերլուծել շահակիցների ներգրավման արդյունավետությունը՝ հատուկ շեշտադրում կատարելով շրջանավարտների և աշխատաշուկայի ներկայացուցիչների ներգրավվածությանը:	Ներկայումս արտաքին շահակիցների (հիմնական գործատուներ, շրջանավարտներ և այլն) մասնակցությունն ապահովված է ԵՊՀ խորհրդում, ԵՊՀ գիտական խորհրդում (ԳԽ), ֆակուլտետների ԳԽ-ներում: Գործատուներն ընդգրկված են ամփոփիչ ավարտական ատեստավորման հանձնաժո-	1. ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման, հաստատման և գնահատման գործընթացներում ընդլայնել արտաքին շահակիցների մասնակցությունը:	2014/15 ուստ. I կիս.	Որակի ապահովման կենտրոնի (ՌԱ) տնօրեն Ա. Բուդաղյան	ՌԱ կենտրոն Ֆակուլտետներ Կենտրոններ	Ծրագրերի մշակման, հաստատման և գնահատման հանձնախմբերում առնվազն մեկ արտաքին շահակի մասնակցություն
		2. Ֆակուլտետների գիտական և կառավարման խորհուրդներում ընդլայնել արտաքին շահակիցների ներգրավվածությունը:	2015/16 ուստ. I կիս.	ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան	ԵՊՀ ռեկտորատ Ֆակուլտետներ	Ֆակուլտետների վերանայված խորհրդի և

	<p>ղովների կազմում: 2013 թ. նոյեմբերին ԵՊՀ ԳԽ-ն ընդունել է «Ձեռ- նարկությունների հետ ֆակուլտետի համագոր- ծակցության խորհրդի կանոնակարգը» և «Ձեռ- նարկությունների հետ ԵՊՀ համագործակցու- թյան ռազմավարությու- նը», իսկ 2013 թ. մայի- սին՝ այդ համագործակ- ցությունն ապահովող մշտական հանձնաժո- ղովի աշխատակարգը:</p>	<p>3. Ներդնել ուսումնական ստորաբաժանումների (ֆակուլտետներ, կենտրոններ) ներքին աուդիտ- ներ՝ արտաքին շահակիցների մասնակցությամբ:</p>	<p>2015/16 ուստ. I կիս. - 2019/20 ուստ. II կիս.</p>	<p>ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան</p>	<p>ԵՊՀ ռեկտորատ Ֆակուլտետ- ներ Կենտրոններ</p>	<p>գիտական խորհրդի կազմերը</p> <p>Ներքին աուդիտի 21 գեկույց</p>
--	---	--	---	-----------------------------------	---	---

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<p style="text-align: center;">Խնդրի ընկալումը</p> <p>(համառոտ ներկայացնել, թե ինչպես է ԵՊՀ-ն ընկալում ավ- յալ չափանիշի շրջանակներում բարձրացված խնդիրների էությունը, ինչպիսի մոտեցումներ կամ մեթոդներ է պատ- րաստվում կիրառել դրանց լուծման համար, ինչպիսի իրա- վիճակ կամ գլոբալ արդյունքներ է ակնկալում դրանց լուծման արդյունքում)</p>	<p>Կառավարման արդյունավետության բարձրացումը ԵՊՀ կարևորագույն հիմնախնդիրներից է, որը պետք է լուծվի ինչպես կազմակերպական կառուցվածքի օպտիմալացման, այնպես էլ արդյունավետ գործընթացների ներդրման ճանապարհով: Որպես այդպիսի գործընթաց՝ առաջին հերթին դիտարկվում է ՊԻՍԲ շրջափուլային մոտեցումը: ԵՊՀ-ն արդեն ունի երկարաժամկետ պլանավորման և այն գործնականորեն իրականացնելու գործուն մեխանիզմներ (Պ-Ի շրջափուլ): Հիմնական խնդիրն այստեղ լինելու է արդյունքների գնահատման և հաջորդող բարելավման գոր- ծողությունների իրականացումը (Ս-Բ շրջափուլ): Այդ նպատակով կառավարման բոլոր մակարդակներում պետք է իրականացվի միջավայրային SWOT վերլուծություն՝ ներքին ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև արտաքին վտանգների և հնարավորությունների բացահայտմամբ: Մյուս կողմից, այս խնդրի իրականացումը պահանջում է բոլոր ներքին շահակիցների և հատկապես դասախոսական կազմի ակտիվ ներգրավում կառավարման բոլոր մա- կարդակներում: Այս ոլորտում մյուս հիմնախնդիրը ԵՊՀ երկարաժամկետ ֆինանսական պլանավորումն է, ինչը պայմանավորված է ԵՊՀ բյուջեի մեծ «լարվածությամբ» (ծախսերի մոտ 70 %-ը բաժին է ընկնում աշխատավարձին): Այնուհանդերձ, քայլեր են իրականացվելու ԵՊՀ ռազմավարական բյուջեի ստեղծան ուղղությամբ:</p>
---	---

Փորձագիտական երաշխավորություն	Խնդրի ընթացիկ վիճակը	Բարելավող գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական և ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձևաչափերի գույքներ
1. Պարզեցնել համալսարանի կազմակերպական կառուցվածքը: Ի վերջո համալսարանը կարող է ընտրել ոչ ուռ-ճացված կազմակերպական կառույցի մի տարբերակ, որը կշարունակի հիմնվել կուլե-	ԵՊՀ-ն ունի ՀՀ բուհական համակարգում ավանդորեն ընդունված կառավարման համակարգ և կազմակերպական կառուցվածք, ինչը որոշակիորեն սահմանված է նաև ՀՀ կրթական օրենսդրությամբ:	1. ԵՊՀ կառավարման համակարգի արդյունավետությունը գնահատելու նպատակով իրականացնել միջավայրային SWOT վերլուծություն:	2014/15 ուստ. I կիս.	ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան	ԵՊՀ ԶՌՊՀ	SWOT վերլուծության գեկույց

գիալ ակադեմիական մշակույթի վրա:		2. Օպտիմալացնել ԵՊՀ կառավարման համակարգի կազմակերպական կառուցվածքը՝ ըստ SWOT վերլուծության արդյունքների:	2015/16 ուստ. I կիս. - 2019/20 ուստ. I կիս.	ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան	ԵՊՀ ռեկտորատ	ԵՊՀ լրամշակված կանոնադրություն ԵՊՀ պարզեցված կազմակերպական կառուցվածք
2. Բյուջեի բաշխումը համապատասխանեցնել ռազմավարական պլանին:	Ներկայումս համալսարանում իրականացվում է միայն տարեկան բյուջետային պլանավորում:	1. Ստեղծել ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ՌԾ-ին համապատասխան ռազմավարական բյուջեի մշակման հանձնախումբ:	2015/16 ուստ. I կիս.	ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան	ԵՊՀ ռեկտորատ Հաշվապահություն	Ռազմավարական բյուջեի մշակման հրամանագրված հանձնախումբ
		2. Մշակել և ընդունել ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական բյուջե:	2015/16 ուստ. I կիս.	ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան	ԵՊՀ ռեկտորատ Հաշվապահություն	ԵՊՀ խորհրդի կողմից հաստատված ռազմավարական բյուջե
3. Կառավարման համակարգն այնպես հարմարեցնել, որպեսզի դասախոսական կազմի ներդրումը կրթական քաղաքականությունների մշակման, կիրարկման և վերանայման գործընթացներում լինի ավելի մեծ:	Ներկայումս դասախոսական կազմը լիարժեք ներգրավված է ֆակուլտետների կառավարման մարմիններում՝ ֆակուլտետների խորհուրդներում և գիտական խորհուրդներում: Բացի այդ, համալսարանի և ֆակուլտետների մակարդակներում գործում են	1. Հիմնել ԵՊՀ դասախոսական խորհուրդ՝ դասախոսական կազմի մասնակցությունը կրթական քաղաքականությունների մշակման և կիրարկման գործընթացներում էականորեն ընդլայնելու նպատակով:	2016/17 ուստ.	ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյան	ԵՊՀ ռեկտորատ Ֆակուլտետներ	Դասախոսական խորհրդի կազմավորման և գործունեության հաստատված կարգ Գործող դասախոսական խորհուրդ

	<p>մեթոդխորհուրդներ և ՈԱ մշտական հանձնաժողովներ, որոնք զգալի ազդեցություն ունեն կրթական քաղաքականության մշակման և կիրարկման գործընթացներում:</p>					
<p>4. Կիրառել ռիսկերի և հնարավորությունների գնահատման ցուցչավորումը որպես պարբերական պլանավորման գործիք:</p>	<p><i>Տե՛ս 10-րդ չափանիշի 4-րդ խորհրդատվական երաշխավորության բարելավող միջոցառումների գործողությունը:</i></p>					
<p>5. Ռազմավարական պլանը, որտեղ հնարավոր է, վերաբարգմանել քանակական թիրախների և տվյալների հավաքման այնպիսի քաղաքականություն իրագործել, որը կնպաստի ռազմավարությանը կազմակերպված ձևով:</p>	<p><i>Տե՛ս 1-ին չափանիշի 2-րդ խորհրդատվական երաշխավորության բարելավող միջոցառումների գործողությունը:</i></p>					
<p>6. Կառավարման բոլոր մակարդակներում փակել ՊԻՍԲ շրջափուլը՝ ռազմավարական պլանին պատասխանող արդյունավետորեն հասնելու նպատակով:</p>	<p><i>Տե՛ս 10-րդ չափանիշի 3-րդ խորհրդատվական երաշխավորության բարելավող միջոցառումների գործողությունը:</i></p>					

7. ՈԱ համակարգում պարտադիր կերպով ներդնել արտաքին փորձագիտական գնահատում:

Տե՛ս 10-րդ չափանիշի 3-րդ խորհրդատվական երաշխավորության բարելավող միջոցառումների գործողությունը:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԶԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

<p style="text-align: center;">Խնդրի ընկալումը</p> <p>(համառոտ ներկայացնել, թե ինչպես է ԵՊՀ-ն ընկալում ավելի չափանիշի շրջանակներում բարձրացված խնդիրների էությունը, ինչպիսի մոտեցումներ կամ մեթոդներ է պատրաստվում կիրառել դրանց լուծման համար, ինչպիսի իրավիճակ կամ գլոբալ արդյունքներ է ակնկալում դրանց լուծման արդյունքում)</p>	<p>ԵՊՀ-ն արժևորում է բարձր կրթական չափանիշների պահպանումը, ինչպես նաև սովորողներին ճկուն ուսումնական ծրագրերի տրամադրումը: Այս իմաստով ԵՊՀ-ում իրականացվում է կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային բազմափուլ վերափոխում արդի միջազգային ծրագրային չափանիշներին համապատասխան: ԵՊՀ-ն պատրաստվում է մշակել դասավանդման և ուսումնառության մեթոդները կրթական վերջնարդյունքներին համապատասխանեցնելու քաղաքականություն, ինչպես նաև նոր կրթական մոտեցումների մշտադիտարկման համակարգ: Այս խնդիրների լուծմանն է ուղղվելու դասավանդման և ուսումնառության (դասավանդման աջակցման) համահամալսարանական կենտրոնի ստեղծումը և ԵՊՀ դասընթացների ու կրթական ծրագրերի որակի առցանց (էլեկտրոնային) կառավարման համակարգի գործարկումը: ԵՊՀ-ն պետք է խթանի միջառարկայական կրթական ծրագրերի մշակումը և իրականացումը՝ նոր ռազմավարական ծրագրում սահմանելով միջառարկայական գերակա ուղղություններ և խթանելով ներբուհական և միջբուհական ակադեմիական համագործակցությունը: Որպես վերջնարդյունք՝ ակնկալում ենք ունենալ դասավանդման և ուսումնառության (դասավանդման աջակցման) համահամալսարանական կենտրոն, դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներին տիրապետող դասախոսական կազմ, կրթական գործընթացում ակտիվորեն ներգրավված ուսանողներ, միջառարկայական կրթական ծրագրեր:</p>
---	---

Փորձագիտական երաշխավորություն	Խնդրի ընթացիկ վիճակը	Բարելավող միջոցառումներ/ գործողություններ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական և ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
<p>1. Մշակել դասավանդման և ուսումնառության մեթոդներն ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանեցնելու հստակ քաղաքականություն, որը հիմնված կլինի անհրաժեշտ տեղեկատվության (միջ-</p>	<p>Լրամշակվել է «Կրթական ծրագրերի և դասընթացների մշակման և իրականացման ղեկավար ձեռնարկը»: ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի (այսուհետ՝ ՈԱԿ) կողմից 2013 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիս-</p>	<p>1. Շահակիցների տարբեր խմբերի համար (վարչական և դասախոսական կազմ, կրթական ծրագրերի ղեկավարներ, ուսումնական խորհրդատուներ) իրականացնել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ուսուցման շարունակական (փուլային) վերապատրաստումներ ՈԱԿ-ի և վերապատրաստված վերապատրաստողների կողմից՝ ուղղված կրթական ծրագրերի (ուսումնական</p>	<p>2014/15 ուստ. I կիս.- 2016/17 ուստ. II կիս.</p>	<p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան</p>	<p>Որակի ապահովման կենտրոն Ֆակուլտետներ Հետբուհական լրացուցիչ</p>	<p>Վերապատրաստված ունկնդիրների թիվը</p>

<p>ազգային) լավագույն փորձի տարածման և դասախոսների և ուսանողների լայն ներգրավման վրա:</p>	<p>ներին իրականացվել են վարչական և դասախոսական կազմից շուրջ 40 վերապատրաստողների վերապատրաստումներ՝ «Դասընթացների և կրթական ծրագրերի որակի ապահովումը» թեմայով: Վերապատրաստման արդյունքում ունկնդիրները ձեռք են բերել կրթական վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների կիրառման հմտություններ:</p>	<p>մոդուլների) վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների կիրառման հմտությունների ձևավորմանը:</p> <p>2. Ստեղծել դասավանդման և ուսումնառության (դասավանդման աջակցման) համահամալսարանական կենտրոն՝ դասավանդման և ուսումնառության առավել արդյունավետ մեթոդների վերաբերյալ մշտապես գործող դասընթացների և աշխատաժողովների կից շարքով՝ ԵՊՀ դասախոսական կազմի դասավանդման որակի էական բարելավման նպատակով:</p>	<p>2014/15 ուստ. I կիս.- 2016/17 ուստ. II կիս.</p>	<p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան</p>	<p>կրթության վարչություն</p> <p>Որակի ապահովման կենտրոն</p> <p>Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն</p> <p>Միջազգային դրամաշնորհ</p>	<p>Դասավանդման և ուսումնառության համահամալսարանական գործող կենտրոն</p>
<p>2. Ներդնել հարցումների իրականացման համակարգ՝ նոր կրթական մոտեցումները քննադատորեն գնահատելու հնարավորություն ստեղծելու համար:</p>	<p>Ստեղծվել է (2013թ. դեկտեմբերին) ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի առցանց (էլեկտրոնային) կառավարման համակարգը (այսուհետ՝ ԴԿԾՈԱԿՀ) և ռեսուրս շտեմարանը (այսուհետ՝ ՌՇ): Կատարվել է համակարգի փորձնական շահագործում:</p> <p>Յուրաքանչյուր կիսամյակ իրականացվում են (2002-</p>	<p>1. Գործարկել ԵՊՀ ԴԿԾՈԱԿՀ-ն և ՌՇ-ն՝ դասընթացների և կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման հետադարձ կապի առցանց մեխանիզմները (ուսանողական հարցումներ և այլն) ապահովելու, ծրագրերի և դասընթացների որակի բարելավմանն ուղղված միջոցառումների և դրանց արդյունքների վերաբերյալ ԵՊՀ-ին և լայն հանրությանն իրազեկելու նպատակով:</p>	<p>2014/15 ուստ. I կիս. - 2015/16 ուստ. II կիս.</p>	<p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան</p> <p>Ուսանողների, շրջանավարտների և հաս. հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան</p>	<p>Որակի ապահովման կենտրոն</p> <p>Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն</p>	<p>Հարցումների գործող առցանց համակարգ</p> <p>Օգտագործողների թիվը</p>

	ից) դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ (թղթային):	2. Լրամշակել դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների մեթոդաբանությունը, համապատասխան կանոնակարգը (ընթացակարգերը) և հարցաթերթի բովանդակությունը:	2014/15 ուստ. I կիս. - 2015/16 ուստ. I կիս.	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան	Որակի ապահովման կենտրոն Ուսումնամեթոդական վարչություն	Լրամշակված կանոնակարգ և հարցաթերթ
3. Խթանել միջառարկայական կրթական ծրագրերի մշակումը:	ԵՊՀ-ում իրականացվող կրթական ծրագրերի մոտ 10%-ը միջառարկայական են:	1. Խրախուսել միջամբիոնային, միջֆակուլտետային, ինչպես նաև միջբուհական ակադեմիական համագործակցությունը (թեմատիկ կոնֆերանսներ, գիտաժողովներ, աշխատաժողովներ, միասնական հետազոտական նախագծեր)՝ ուղղված համատեղ միջառարկայական կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը:	2014/15 ուստ. II կիս.-2016/17 ուստ. I կիս.	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան Գիտական քաղաքականության և միջազգային համագործ. գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	Ռեկտորատ Ֆակուլտետներ Կենտրոններ Դրամաշնորհային ծրագրեր	Միջառարկայական ծրագրերի թիվը
		2. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում (ՌԾ) սահմանել միջառարկայական գերակա ուղղությունները:	2014/15 ուստ. II կիս.-2015/16 ուստ. I կիս.	Ռեկտոր Ա. Միմոնյան	Ռազմավարական պլանավորման հանձնախումբ	ԵՊՀ խորհրդի կողմից հաստատված ՌԾ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

<p style="text-align: center;">Խնդրի ընկալումը</p> <p>(համառոտ ներկայացնել, թե ինչպես է ԵՊՀ-ն ընկալում սվլ-յալ չափանիշի շրջանակներում բարձրացված խնդիրների էությունը, ինչպիսի մոտեցումներ կամ մեթոդներ է պատրաստվում կիրառել դրանց լուծման համար, ինչպիսի իրավիճակ կամ գլոբալ արդյունքներ է ակնկալում դրանց լուծման արդյունքում)</p>	<p>ԵՊՀ-ն էապես կարևորում է ուսանողների մասնակցությունը ներհամալսարանական կյանքին: Յուրաքանչյուր կարողունակ անհատի համար մատչելի կրթությունը, ուսանողի կրթական ձեռքբերումները, հետազոտական և ստեղծագործ աշխատանքը ԵՊՀ ռազմավարական ծրագրում ամրագրված հիմնարար արժեքներից են: ԵՊՀ առանձնահատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող ուսանողների խմբերի համար անհրաժեշտ է ստեղծել լրացուցիչ օժանդակ պայմաններ նրանց ուսումնառության և համալսարանական կյանքին լիարժեք մասնակցելու համար: Այս խնդիրը հնարավոր է լուծել պետական հատուկ ծրագրերի և աջակցության շնորհիվ: ԵՊՀ-ում գործում է ուսանողների կարիքների բացահայտման համակարգ: Այդուհանդերձ, ԵՊՀ-ն նախատեսում է զարգացնել այդ համակարգի որոշ բաղադրիչներ (կուրսատորների ինստիտուտի կատարելագործում, նոր մեխանիզմների ներդրում, էլեկտրոնային գործիքների ստեղծում և այլն): Պրակտիկաները ուսանողների ուսումնառության կարևորագույն բաղադրիչներից են և էապես կարևորվում են աշխատաշուկայում շրջանավարտների մրցունակության ապահովման տեսանկյունից: ԵՊՀ-ի կողմից հետևողական աշխատանքներ են իրականացվելու տարբեր ձևերով ուսանողների և կազմակերպությունների հետ փոխգործակցությունը զարգացնելու ուղղությամբ, որի արդյունքում ուսանողներին կընձեռվեն գործնական հմտությունների զարգացման նոր հնարավորություններ: Ուսանողների կողմից վարչական անձնակազմին դիմելու ընթացակարգերը բավականին կայացած են: Միաժամանակ, ուսանողների հետ տարվող աշխատանքների շրջանակներում նախատեսվում է կատարելագործել նշված ընթացակարգերը և դրանք ամբողջականացնել մեկ միասնական փաստաթղթում: Այս աշխատանքներն իրականացվելու են ուսանողների իրավունքների պաշտպանության համակարգի զարգացման ենթատեքստում: Համալսարանում իրականացվում են բազմաթիվ գիտական ծրագրեր (թեմատիկ, բազային, դրամաշնորհային և այլն), որոնցում ուսանողների մասնակցության խթանումը հանդիսանալու է կարևոր առաջնահերթություն: Որպես վերջնարդյունք՝ կձևավորվեն մի շարք հարցեր կանոնակարգող փաստաթղթեր, որոշ աշխատանքներ կներառվեն 2015-2020 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում, կգնահատվի ուսանողներին առնչվող մի շարք ընթացակարգերի արդյունավետությունը, կբարձրանա ուսանողների ներգրավվածությունը գիտական հետազոտություններում, կկատարելագործվեն ուսանողների իրավունքների պաշտպանության մեխանիզմները:</p>
---	---

Փորձագիտական երաշխավորություն	Խնդրի ընթացիկ վիճակը	Բարելավող գործողություններ/միջոցառումներ,	Իրականացման ժամանակ-	Պատասխանատու (նշել պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
-------------------------------	----------------------	---	----------------------	--	---	--

		քայլեր	կահատված		և ֆինանսական)	
1. Խրախուսել և պաշտոնականացնել առանձնահատուկ կարիքներ ունեցող և հաշմանդամ ուսանողների ներգրավվածությունը համալսարանի կառավարման մարմիններում:	Առանձնահատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող ուսանողները սովորում են անվճար կամ ստանում համապատասխան զեղչեր: Շարժողական սահմանափակումներ ունեցող անձանց համար ԵՊՀ մասնաշենքերը հարմարեցված չեն:	1. Առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների և անձնակազմի համար անհրաժեշտ պայմանների ստեղծման ռազմավարությունը ներառել ԵՊՀ զարգացման 2016-2020 թթ. ռազմավարական ծրագրում:	2013/14 ուստ. II կիս. - 2014/15 ուստ. I կիս.	Ուսանողների շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան	Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին Արհեստակցական կազմակերպություն Ուսանողական խորհուրդ	Զարգացման ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթներ
		2. Համալսարանի ենթակառուցվածքները հնարավորինս համապատասխանեցնել շարժական խնդիրներ ունեցող անձանց կարիքներին:	2015/16 ուստ. I կիս. - 2019/20 ուստ. II կիս.	Գլխավոր ինժեներ Ա. Հարությունյան	Պետական լրացուցիչ ֆինանսավորում	ԵՊՀ ենթակառուցվածքները հնարավորինս հարմարեցված են շարժասայլակներին
		3. Մշակել և իրականացնել առանձնահատուկ կարիքներ ունեցող և հաշմանդամ ուսանողների ուսումնառությանն առնչվող խնդիրների լուծմանը, ուսանողական կյանքին և համալսարանի կառավարմանը մասնակցությունը խթանող ծրագրեր:	2015/16 ուստ. I կիս. - 2016/17 ուստ. II կիս. -	Ուսանողների շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան	Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին Ուսանողական խորհուրդ	Թիրախ խմբի ուսանողների մասնակցության %-ի աճ
		4. Ավելացնել առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար հեռավար ուսուցման դասընթացների քանակը:	2015/16 ուստ. II կիս. - 2019/20 ուստ. II կիս. -	Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Ս. Շուքուրյան	Ուսումնամեթոդական վարչություն Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն	Հեռավար ուսուցման նոր դասընթացներ

					Դրամաշնորհային ծրագրեր	
2. Գնահատել ուսանողների կարիքների բացահայտման մեխանիզմների արդյունավետությունը:	Ուսանողների կարիքների բացահայտման մասնակցում են կուրատորները, ուսանողական կառույցները (ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին, Ուսխորհուրդ, ՈԻԳԸ), Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը և այլ օղակներ:	1. Ուսումնասիրել ուսանողների կարիքների բացահայտման մեխանիզմները, գնահատել դրանց արդյունավետությունը, մշակել համապատասխան երաշխավորություններ:	2014/15 ուստ. II կիս. - 2015/16 ուստ. I կիս.	Ուսանողների շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան	Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին Շրջանավարտների և կարիերայի կենտրոն	Վերլուծական զեկույց, երաշխավորություններ
3. Գնահատել՝ որքանով են լրացուցիչ դասընթացներն ու պրակտիկաները նպաստում ակնկալվող որակավորումների ձևավորմանը:	ԵՊՀ մի շարք կառույցներ ուսանողներին առաջարկում են լրացուցիչ դասընթացների հնարավորություններ: Բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական պլանների համաձայն նախատեսված են ուսումնական, արտադրական և մանկավարժական	1. Իրականացնել լրացուցիչ դասընթացների և պրակտիկաների կազմակերպման խնդիրների ուսումնասիրություն և գնահատել դրանց արդյունավետությունը:	2014/15 ուստ. II կիս. - 2015/16 ուստ. I կիս.	Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Մամհարյան	Ուսումնամեթոդական վարչություն Շրջանավարտների և կարիերայի կենտրոն	Վերլուծական զեկույց
6. Գնահատել՝ որքանով են պրակտիկաները նպաստում անհրաժեշտ որակավորումների ձեռքբերմանը:	ԵՊՀ մի շարք կառույցներ ուսանողներին առաջարկում են լրացուցիչ դասընթացների հնարավորություններ: Բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական պլանների համաձայն նախատեսված են ուսումնական, արտադրական և մանկավարժական	1. Իրականացնել լրացուցիչ դասընթացների և պրակտիկաների կազմակերպման խնդիրների ուսումնասիրություն և գնահատել դրանց արդյունավետությունը:	2014/15 ուստ. II կիս. - 2015/16 ուստ. I կիս.	Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Մամհարյան	Ուսումնամեթոդական վարչություն Շրջանավարտների և կարիերայի կենտրոն	Վերլուծական զեկույց

	պրակտիկաներ: Դրանց արդյունավետությունը գնահատվում է շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ տարեկան հարցումների ընթացքում:					
4. Մշակել հստակ պաշտոնական ընթացակարգ և ժամանակացույց, ինչը կօգնի ուսանողներին դիմել վարչական անձնակազմին իրենց խնդիրներով:	Ուսանողների կողմից վարչական աշխատակազմին դիմելու պրակտիկան գործում է, ձևավորված են որոշակի մեխանիզմներ, իսկ առանձին հարցերի պարագայում սահմանված են նաև համապատասխան ընթացակարգեր, այդ թվում՝ ժամանակացույցներ:	1. Մշակել ԵՊՀ ուսանողների կողմից վարչական աշխատակազմին դիմելու կանոնակարգ:	2014/15 ուստ.	Ուսանողների շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան	Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին Ուսանողական խորհուրդ	Կանոնակարգ
5. Փոխկապակցել ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեությունը և գնահատել հետազոտական գործունեության արդյունավետությունը:	Ուսանողական հետազոտական աշխատանքները խթանելու նպատակով ԵՊՀ-ում գործում է ուսանողական գիտական ընկերու-	1. Ստեղծել գիտամանկավարժական անձնակազմի կողմից կատարվող հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը խթանող մեխանիզմներ և գնահատել դրանց արդյունավետությունը:	2015/16 ուստ. I կիս. - 2016/17 ուստ. II կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	Ֆակուլտետներ Ուս. հետ տարվող աշխատանքների բաժին ՈՒԳԸ	Ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող նոր մեխանիզմներ

թյունը:	թյուն (ՈԻԳԸ): ՈԻԳԸ աշխատանքներին որպես գիտական ղեկավարներ կամ խորհրդատուներ աջակցում են դասախոսները (2012/13 ուստարում շուրջ 300 դասախոս մասնակցել է ՈԻԳԸ ծրագրերին):	2. Խթանել ուսանողների կողմից իրականացվող հետազոտական աշխատանքները:	2016/17 ուստ. I կիս. - 2019/20 ուստ. II կիս.	Ուսանողների շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան	Գիտակազմակերպական բաժին Ֆակուլտետներ Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին ՈԻԳԸ	Ուսանողների հետազոտական նոր նախագծեր
7. Ուսումնասիրել ուսանողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների արդյունավետությունը և վերլուծել վերջիններիս ազդեցությունը:	Ուսանողների իրավունքների պաշտպանության և մի շարք այլ խնդիրների լուծման համար ԵՊՀ-ում գործում են Ուսանողական խորհուրդը, Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժինը, որոնց աշխատանքները համակարգում է ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորը:	1. Ուսումնասիրել ուսանողների իրավունքների պաշտպանության գործող մեխանիզմների արդյունավետությունը և ներկայացնել երաշխավորություններ:	2015/16 ուստ.	Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի վարիչ Վ. Վարպայան	Ուսանողական խորհուրդ	Վերլուծական զեկույց, երաշխավորություններ
		2. Զարգացնել ուսանողների իրավունքների պաշտպանության համակարգը:	2015/16 ուստ. I կիս. - 2016/17 ուստ. II կիս.	Ուսանողների շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան	Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին Ուսանողական խորհուրդ	Ուսանողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ ուսանողների գոհունակության աճ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

<p style="text-align: center;">Խնդրի ընկալումը</p> <p>(համառոտ ներկայացնել, թե ինչպես է ԵՊՀ-ն ընկալում սվլ-յալ չափանիշի շրջանակներում բարձրացված խնդիրների ելույթները, ինչպիսի մոտեցումներ կամ մեթոդներ է պատրաստվում կիրառել դրանց լուծման համար, ինչպիսի իրավիճակ կամ գլոբալ արդյունքներ է ակնկալում դրանց լուծման արդյունքում)</p>	<p>ԵՊՀ-ն կարևորում է բարձրորակ դասախոսական կազմի ներգրավումը՝ նրան տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ: Այդ նպատակով ԵՊՀ-ն պետք է մշակի դասախոսական կազմի ընտրության և կատարելագործման քաղաքականություն՝ դասախոսական կազմին ներկայացնելով ըստ կրթական ծրագրերի հստակ պահանջներ: Պետք է ընդլայնել և բազմազանեցնել դասախոսների կատարելագործման ծրագիրը՝ ապահովելով մասնագիտական զարգացման դասընթացների փոխկապացումը կրթական ծրագրերի որակավորումների հետ, հարցումների արդյունքներով ուղղորդելով դասախոսի որակավորման բարձրացման անհատական ծրագիրը, ինչպես նաև ներդնելով երիտասարդ դասախոսների կատարելագործման համակարգ: Միաժամանակ, ԵՊՀ-ն կարևորում է վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի դերը կրթության որակի ապահովման գործում և նախատեսում է մշակել նրանց անձնագրավորման, ատեստավորման և վերապատրաստման գործընթացները: Որպես վերջնարդյունք՝ ակնկալում ենք ունենալ պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման ժամանակակից համակարգ և կրթական ծրագրերին ու որակավորումներին համապատասխան վերապատրաստված դասախոսներ, ինչպես նաև համապատասխան կրթական միջավայր ապահովող վարչական և ուսումնաօժանդակ կազմ:</p>
--	---

Փորձագիտական երաշխավորություն	Խնդրի ընթացիկ վիճակը	Բարելավող միջոցառումներ/ գործողություններ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական և ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
1. Սահմանել կրթական ծրագրի պահանջներին համապատասխան դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական հստակ որակներ:	ԵՊՀ-ում գործում է պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգը, որտեղ սահմանված են պահանջներ ըստ տարակարգերի:	1. Կրթական ծրագրերի մասնագրերում սահմանել դասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր (այդ թվում՝ նաև մանկավարժական) և մասնագիտական պահանջներ՝ ծրագրի նպատակին և կրթական վերջնարդյունքներին համապատասխան: Նշված պահանջները ներառել մրցույթի հայտարարության մեջ և հաշվի առնել ուսումնական բեռնվածության բաշխման ժամանակ:	2014/15 ուստ. II կիս.-2016/17 ուստ. I կիս.	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան	Ֆակուլտետներ Որակի ապահովման կենտրոն	Լրամշակված մասնագրեր Մասնագրերի կիրարկում

<p>2. Ներդնել երիտասարդ դասախոսներին խորհրդատվության ու փոխօգնության համակարգ:</p>	<p>Ասպիրանտների դասավանդման հմտությունները զարգացնելու նպատակով նրանց անհատական ծրագրում նախատեսված է 150 ժամ դասավանդում: Ամբիոնի վարիչների և փորձառու պրոֆեսորների կողմից իրականացվում են երիտասարդ դասախոսների դասալսումներ:</p>	<p>1. Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրում ընդգրկել պարտադիր դասընթաց՝ միտված երիտասարդ դասախոսների դասավանդման հմտությունների զարգացմանը:</p>	<p>2016/17 ուստ.</p>	<p>Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Աղայան</p>	<p>Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն</p>	<p>Դասընթացի հաստատված ծրագիր</p>
<p>3. Կիրառել ուսանողական հարցման արդյունքները՝ դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրերն ուղղորդելու և անհատականացնելու նպատակով:</p>	<p>Ուսանողական հարցման արդյունքները վերլուծվում և քննարկվում են ֆակուլտետների գիտխորհուրդներում և ամբիոնների նիստերում: 5-ամյա պարբերականությամբ գործում է դասախոսների կատարելագործման պարտադիր ծրագիրը, որում ներառված է կրթական 5 ուղղություն (ընդհանուր, մանկավարժական-հոգեբանական, մասնագիտական և այլ պատրաստություն):</p>	<p>1. Ընդլայնել և բազմազանեցնել դասախոսների որակավորման բարձրացման երկու ուղղությունները (մասնագիտական և մանկավարժական-հոգեբանական)՝ հնարավորություն տալով յուրաքանչյուր դասախոսի հարցումների արդյունքներով վերաձևավորելու որակավորման բարձրացման իր անհատական ծրագիրը:</p>	<p>2017/18 ուստ. II կիս. - 2018/19 ուստ. II կիս.</p>	<p>Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Աղայան</p>	<p>Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն</p>	<p>Նոր մշակված դասընթացներ Վերապատրաստվածների թիվը</p>
<p>4. Բարելավել դասախոսական կազմի անզլերեն լեզվի իմացությունը:</p>	<p><i>Տե՛ս 9-րդ չափանիշի 5-րդ խորհրդատվական երաշխավորության բարելավող միջոցառումների գործողությունը:</i></p>					

<p>5. Փոխկապակցել մասնագիտական զարգացման դասընթացները կրթական ծրագրերի որակավորումների հետ:</p>	<p>Դասախոսների որակավորման բարձրացման ծրագիրն ունի մասնագիտական (կրթական) և հետազոտական բաղադրիչներ: ԵՊՀ-ում գործում է Մոսկվայի Բաումանի անվ. տեխնիկական համալսարանի հեռավար ուսուցման կետ՝ ԵՊՀ դասախոսների համար հասանելի էլեկտրոնային հարուստ ռեսուրսներով:</p>	<p>1. Ընդլայնել որակավորման բարձրացման ծրագրի մասնագիտական պատրաստության բաղադրիչը՝ օգտագործելով նաև հեռավար ուսուցման հնարավորությունները:</p>	<p>2016/17 ուստ. I կիս.-2018/19 ուստ. II կիս.</p>	<p>Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Աղայան</p>	<p>Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն</p>	<p>Հեռավար դասընթացների ծրագրեր Ունկնդիրների թիվը</p>
<p>6. Մշակել մասնագիտական չափորոշիչներ և բարելավման մեխանիզմներ՝ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման համար:</p>	<p>Մշակման փուլում են ԵՊՀ վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և օժանդակ կազմի պաշտոնների անձնագրերի համակարգը և նրանց իրավասությունների սահմանման ու ատեստավորման կարգերը: Ռեկտորի հրամանով սահմանված են ուսումնաօժանդակ աշխատողների հիմնական գործառույթներն ըստ տարակարգերի: Անց է կացվում ուսումնաօժանդակ կազմի ամենամյա ատեստավորում:</p>	<p>1. Մշակել վարչական պաշտոնների անձնագրերը:</p>	<p>2014/15 ուստ.</p>	<p>Ուսանողների, շրջանավարտների և հաս. հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան</p>	<p>Ռեկտորատ</p>	<p>Պաշտոնների անձնագրերի առկայություն</p>
		<p>2. Մշակել վարչական և ուսումնաօժանդակ կազմերի ատեստավորման միասնական կարգ:</p>	<p>2015/16 ուստ.</p>	<p>Ուսանողների, շրջանավարտների և հաս. հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան</p>	<p>Ռեկտորատ</p>	<p>Հաստատված կարգ</p>

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

<p style="text-align: center;">Խնդրի ընկալումը</p> <p>(համառոտ ներկայացնել, թե ինչպես է ԵՊՀ-ն ընկալում ավելի չափանիշի շրջանակներում բարձրացված խնդիրների էությունը, ինչպիսի մոտեցումներ կամ մեթոդներ է պատրաստվում կիրառել դրանց լուծման համար, ինչպիսի իրավիճակ կամ գլոբալ արդյունքներ է ակնկալում դրանց լուծման արդյունքում)</p>	<p>Գիտահետազոտական քաղաքականության ռազմավարությունը մաս է կազմում ԵՊՀ զարգացման ծրագրի և իրականացվում է ավանդաբար ուժեղ գիտական ուղղությունների ու դպրոցների պահպանման ու զարգացման, հետազոտական աշխատանքների և արդյունքների միջազգայնացման, հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների ընդլայնման և ամրապնդման ճանապարհներով: ԵՊՀ-ն պատրաստվում է 2016-2020 թթ. իր զարգացման ռազմավարական ծրագրում ամրագրել գիտահետազոտական գործունեության առաջանցիկ տեմպերով զարգացման խնդիրները, դրանց կատարման համար անհրաժեշտ ռեսուրսները, ժամանակացույցը և հետևողականորեն իրագործել այն: Դրա համար պլանավորված է իրականացնել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների համակարգված շարք՝ ներառելով, մասնավորապես,</p> <ul style="list-style-type: none"> • փոփոխություններ հաստիքային մրցույթների անցկացման և տարբերակված հավելվածների սահմանման կարգերում, որոնցով ավելի կլիրախուսվեն միջազգային համագործակցությունը և հրապարակումները միջազգային մասնագիտական ամսագրերում, • գիտական հաստիքների՝ մրցույթներով զբաղեցման շարունակական կիրառում՝ արդյունքների կիրառական և արտաքին աղբյուրներից միջոցների ձեռքբերման հեռանկարների կարևորումով, • գերազանցության կենտրոնների ստեղծում՝ ներառելով ՀՀ սահմաններից դուրս գտնվող համալսարանների նյութական ու ֆինանսական ներդրումների հնարավորությունները, • ուսումնական ծրագրերում երիտասարդ խոստումնալից գիտաշխատողների համամասնության ավելացում, • ուսանողական կոնստրուկտորական բյուրոների ստեղծում և այլն: <p>Սույն խնդիրների շուրջ ԵՊՀ-ն լրամշակելու և ներդնելու է կատարողականի մշտադիտարկման և արդյունքների որակի ներքին փորձագիտական գնահատման ամբողջական համակարգ՝ ԵՊՀ և ֆակուլտետային գիտական խորհուրդների մակարդակներում պարբերաբար լսելով և քննարկելով աշխատանքների ընթացիկ վիճակը:</p> <p>Որպես սահմանված միջոցառումների և խնդիրների լուծման վերջնարդյունք՝ ԵՊՀ-ն ակնկալում է ունենալ գիտահետազոտական գործունեության բարեփոխված ռազմավարություն՝ ժամանակացույց-պլանով, արդյունավետ գործող գերազանցության կենտրոններ և գիտական լաբորատորիաներ՝ միջազգայնացման էապես ընդլայնված մասշտաբներով, հետազոտական գործունեության համար արտաքին աղբյուրներից մուտքերի մեծացում, գիտական հրատարակությունների շոշափելի աճ միջազգային բարձր վարկանիշ ունեցող մասնագիտական ամսագրերում, առավել արդյունավետ գործառնող գիտակազմակերպչական բաժին և միջֆակուլտետային և ՀՀ ԳԱԱ ինստիտուտների հետ գիտաուսումնական համագործակցություն, ուսումնական ծրագրերում գիտահետազոտական արդյունքների ներառման և մշտադիտարկման մեխանիզմներ, հետազոտական աշխատանքների լավ փորձառությամբ դասախոսական</p>
---	---

կազմ և ուսանողներ, անգլերեն լեզվի գիտակրթական մակարդակի բարձրացում ԵՊՀ բնագիտական ստորաբաժանումներում:

Փորձագիտական երաշխավորություն	Խնդրի ընթացիկ վիճակը	Բարելավող գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական և ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
<p>1. Վերանայել և մասնավորեցնել համալսարանի հետազոտության ռազմավարությունը:</p> <p>3. Որդեգրել քաղաքականություն, որը նպատակաուղղված կլինի հետազոտական գործունեության համար արտաքին աղբյուրներից եկամուտների մեծացմանը:</p>	<p>Գիտական քաղաքականության ռազմավարությունը մաս է կազմում ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2014 թթ.):</p> <p>ԵՊՀ բյուջեի 12 %-ը կազմում է գիտության մասնաբաժինը:</p> <p>Ներկայումս գիտության ֆինանսավորման 64 % -ը ՀՀ պետական բյուջեի միջոցներն են, իսկ 36 %-ը՝ արտաբյուջետային, որի հիմնական մասը եվրոպական դրամաշնորհներն են:</p>	<p>1. Մշակել և ԵՊՀ գիտական խորհրդում հաստատել ԵՊՀ գիտահետազոտական գործունեության 2015-2020 թթ. ռազմավարություն, որը կներառի նաև հետազոտական գործունեության համար արտաքին աղբյուրներից եկամուտների մեծացման և բազմազանեցման միջոցառումներ:</p>	<p>2013/14 ուստ. II կիս.- 2014/15 ուստ. I կիս.</p>	<p>Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան</p>	<p>ԵՊՀ գիտահետազոտական գործունեության ռազմավարություն մշակող հանձնախումբ</p>	<p>ԵՊՀ գիտխորհրդի կողմից ԵՊՀ գիտահետազոտական գործունեության 2015-2020 թթ. ռազմավարության հաստատում</p>
<p>2. Ընդլայնել հետազոտական գործունեությունը՝ ջանքերը կենտրոնացնել</p>	<p>ԵՊՀ-ում գործում են առաջավոր փորձի ուսումնասիրման և տարածման հետևյալ</p>	<p>1. Ստեղծել կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոն:</p>	<p>2013/14 ուստ. II կիս.- 2015/16</p>	<p>Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության</p>	<p>ԵՊՀ բյուջե և նորարարությունների մրցակցային հիմնադրամի ՀՀ ԿԳՆ «Կրթության</p>	<p>Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի գործունեություն</p>

լով հիմնականում գերազանցության կենտրոնների սահմանափակ քանակի վրա՝ ներառելով Հայաստանի և վերջինիս սահմաններից դուրս գտնվող այլ համալսարանների և կրթական կենտրոնների ներդրումները: Այս կենտրոնները կարող են խթանել նորարարությունը և հանդես գալ որպես հիմնաքար հետագայում դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակման գործընթացում: Այս մոտեցումը հնարավոր է ներդնել բազմաառարկայական ծրագրերի միջոցով, իսկ փորձագիտական խումբը քաջալերում է համալսարանին որդեգրել կրթական ծրագրի	կենտրոնները. 1. Տեղեկատվական տեխնոլոգիաների հայ-հնդկական գերազանցության կենտրոնը (2012 թ.), 2. Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, 3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնագիտական կենտրոնը, 4. Եվրոպական հետազոտությունների կենտրոնը:		ուստ. I կիս.	ցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի միջոցներ Կենսաբանության ֆակուլտետ	
		2. Հիմնել IBM-ի գերազանցության կենտրոն:	2014/15 ուստ. I կիս.- 2017/18 ուստ. II կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	ԵՊՀ բյուջե IBM Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ	IBM գերազանցության կենտրոնի գործունեություն
		3. Մշակել գերակա ուղղություններով գերազանցության կենտրոնների ստեղծման ռազմավարություն:	2015/16 ուստ. I կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	Գերակա ուղղություններով գերազանցության կենտրոնների ստեղծման ռազմավարություն մշակող հանձնաժողով	ԵՊՀ գիտխորհրդի կողմից գերակա ուղղություններով գերազանցության կենտրոնների ստեղծման ռազմավարության հաստատում

մշակման այս առավել ժամանակակից մոտեցումը՝ ավելի շատ հորիզոնական ինտեգրում ապահովելով:						
4. Մեծացնել միջազգային բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հրապարակումների քանակը և բարելավել որակը՝ համալսարանի տեսանկյունից թյունն ապահովելու նպատակով:	Տարբերակված հավելվածների համակարգում ազդեցության գործակից ունեցող հանդեսներում հրապարակումը գնահատվում է մյուս հրապարակումներից բարձր: Անգլերեն հրատարակվում են «Գիտական տեղեկագիր» հանդեսի երեք շաբթյան միայն երկուսը, «Բանբերը» հրատարակվում է հայերեն և ռուսերեն: ԵՊՀ կայքում տեղադրված են գիտական հանդեսների վերջին 5 տարիների համարները:	1. Մշակել միջազգային բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հրապարակումների խրախուսման մեխանիզմներ:	2014/15 ուստ. I կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	ԵՊՀ բյուջե Համապատասխան հանձնաժողովի աշխատանք	Համապատասխան հրապարակումների թվի ավելացում
		2. Ապահովել ԵՊՀ գիտական պարբերականների բոլոր համարների (սկսած հիմնադրումից) մատչելիությունը համացանցում:	2013/14 ուստ. II կիս.- 2019/20 ուստ. I կիս.	Հանդեսների պատասխանատու քարտուղարներ Մ. Շարամբեյան, Մ. Աբգարյան	ԵՊՀ բյուջե	Յուրաքանչյուր տարին ախկիսում հրատարակված համարների ավելացում համացանցում
		3. Հրատարակել «ԵՊՀ գիտական տեղեկագիր» հանդեսի «Աշխարհագրություն և երկրաբանություն» շաբթյան անգլերեն:	2015/16 ուստ. II կիս.	Հանդեսի գլխավոր խմբագիր Հ. Մարգարյան և պատասխանատու քարտուղար Մ. Շարամբեյան	ԵՊՀ բյուջե	«ԵՊՀ գիտական տեղեկագիր» հանդեսի «Աշխարհագրություն և երկրաբանություն» շաբթյան հրատարակում անգլերեն
		4. Հրատարակել «ԵՊՀ Բանբեր» հանդեսի հոդվածների ընտրանու էլեկտրոնային տարբերակը անգլերեն:	2015/16 ուստ. II կիս.	Հանդեսի գլխավոր խմբագիր Հ. Միրզոյան	ԵՊՀ բյուջե	Առկայություն համացանցում
5. Մշակել հետազո-	Մշակվել են գիտա-	1. Համալսարանի կամ ֆակուլտետ-	2014/15	ԵՊՀ ռեկտոր	ԵՊՀ և	Գիտխորհուրդների

տության ռազմավարության իրականացման և որակի վերահսկման գործիքներ:	կան հաստիքների տեղակալման կարգը և իրականացվել են մրցույթներ:	ների գիտական խորհուրդներում լսել գիտական ստորաբաժանումների հաշվետվությունները:	ուստ. II կիս.	Ֆակուլտետների ղեկաններ	Ֆակուլտետների գիտական խորհուրդներ	որոշումները
		2. Ապահովել գիտական հաստիքների զբաղեցումը, որպես կանոն, մրցույթներով:	2014/15 ուստ. II կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	ԵՊՀ և ֆակուլտետների գիտական խորհուրդներ	Գիտաշխատողների ավելի քան 90 %-ի պաշտոնների զբաղեցում մրցույթով
		3. ԵՊՀ գիտական խորհրդում քննարկել ԵՊՀ գիտահետազոտական գործունեության ռազմավարության տարեկան կատարողականը:	2015/16 ուստ. I կիս. – 2019/2020 ուստ. I կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	ԵՊՀ գիտական խորհուրդ	ԵՊՀ գիտահետազոտական գործունեության ռազմավարության կատարողականի գնահատում
		4. Ներդնել գիտական արդյունքների որակի ներքին փորձագիտական գնահատման համակարգ:	2018/19 ուստ. II կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	Համապատասխան հանձնաժողովի աշխատանք	Գիտական արդյունքների որակի ներքին փորձագիտական գնահատման համակարգի գործարկում
6. Մշակել քաղաքականություն, որով կհավաստի, որ հետազոտությունը դարձել է ուսումնառության էական	ԵՊՀ-ն ունի հետազոտական համալսարան դառնալու հստակ սահմանված հավակնություն, ներառյալ հետազոտական գոր-	1. Խրախուսել և համակարգել ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը ԵՊՀ և ՀՀ ԳԱԱ գիտական ստորաբաժանումների առաջատար մասնագետների կողմից՝ ցուցանիշները	2016/17 ուստ. I կիս.	Ֆակուլտետների ղեկաններ	Համապատասխան հանձնաժողովի աշխատանք	Գիտխորհրդի որոշում

<p>մեթոդ ակադեմիական կրթության մեջ: Համապատասխան կրթական մակարդակներում ուսանողների վերապատրաստումը հետազոտության և գիտական մտածողության ուղղությամբ պետք է դառնա բոլոր կրթական ծրագրերի բաղկացուցիչ մաս:</p>	<p>ծուեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների շարունակական կատարելագործումը՝ եվրոպական չափանիշներին համապատասխան: Բակալավրի կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս է կուրսային աշխատանքների և ավարտական աշխատանքի կատարումը:</p>	<p>ներառելով ֆակուլտետների դեկանների տարեկան հաշվետվություններում պարտադիր ներկայացվող տեղեկությունների շարքում:</p>				
	<p>Մագիստրոսի կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս են ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքը, մագիստրոսական թեզը, գիտական սեմինարի մասնակցությունը:</p> <p>Բնագիտական ֆակուլտետների բակալավրի կրթական ծրագրերում մեծ տեղ է հատկացված լաբորատոր աշխատանք-</p>	<p>2. Կանոնակարգել կուրսային աշխատանքների իրականացման գործընթացը:</p>	<p>2016/17 ուստ. I կիս.</p>	<p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան</p>	<p>Մեթոդական խորհուրդ</p>	<p>ԵՊՀ գիտխորհրդի կողմից կուրսային աշխատանքների իրականացման կարգի հաստատում</p>
		<p>3. Բարելավել բարձրագույն կրթության երրորդ աստիճանի (ասպիրանտուրայի) կրթական ծրագիրը՝ այն համապատասխանեցնելով Զայցբուրգյան սկզբունքներին:</p>	<p>2017/18 ուստ. I կիս.</p>	<p>Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան</p>	<p>Տեմպուսի “VERITAS” ծրագիր և ԵՊՀ ասպիրանտուրայի և գիտակազմակերպական բաժիններ</p>	<p>Ասպիրանտուրայի կրթական ծրագրերի համապատասխանություն Զայցբուրգյան սկզբունքներին</p>
		<p>4. Մագիստրատուրայում ներմուծել հետազոտական աշխատանքի սկզբունքներին, պլանավորմանը և մեթոդներին նվիրված դասընթաց:</p>	<p>2016/17 ուստ. I կիս.</p>	<p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան</p> <p>Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան</p>	<p>Ֆակուլտետներ</p>	<p>Մագիստրատուրայի լրամշակված ուսումնական պլաններ</p>
		<p>5. Ստեղծել ուսանողական կոնսուլտորական բյուրոներ:</p>	<p>2014/15 ուստ.</p>	<p>Գիտական քաղաքականության</p>	<p>ԵՊՀ բյուջե, ուսանողական գիտական ըն-</p>	<p>Ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, աշխարհա-</p>

	<p>ներին: ԵՊՀ հիմնական գիտական անձնակազմը ԵՊՀ պրոֆեսորները և դոցենտներն են, ինչը ապահովում է հետազոտական արդյունքների անընդհատ ներառումը ուսումնական գործընթացում, առավելապես մագիստրոսական մակարդակում: Նկատելի կառույցներից է ուսանողական գիտական ընկերությունը, որը պարբերաբար կազմակերպում է գիտական աշխատանքների հրատարակություն, միջազգային, հանրապետական և ֆակուլտետային գիտաժողովներ և այլն:</p>		<p>I կիս.- 2015/16 ուստ. II կիս.</p>	<p>և միջազգային համագործակցության զծով պրոռեկտոր Գ. Գևորգյան</p>	<p>կերություն</p>	<p>գրության և երկրաբանության ֆակուլտետներում ուսանողական կոնստրուկտորական բյուրոյի ստեղծում</p>
		<p>6. Ընդլայնել ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, ապահովել գիտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրատուրայի ուսանողների 25 % մասնակցություն:</p>	<p>2018/19 ուստ. II կիս.</p>	<p>Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության զծով պրոռեկտոր</p>	<p>Մասնագիտական ամբիոններ</p>	<p>Ասպիրանտների և մագիստրատուրայի ուսանողների մասնակցության տոկոսը</p>

				Գ. Գևորգյան		
		7. Առկա հնարավորություններն ուղղել ԵՊՀ ուսումնական գործընթացներում խոստումնալից գիտաշխատողների ընդգրկվածության ավելացմանը:	2015/16 ուստ. I կիս.	Ֆակուլտետների ղեկաններ	ԵՊՀ երիտասարդ գիտաշխատողներ	Դեկանի հաշվետվություն

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

<p>Խնդրի ընկալումը (համառոտ ներկայացնել, թե ինչպես է ԵՊՀ-ն ընկալում տվյալ չափանիշի շրջանակներում բարձրացված խնդիրների էությունը, ինչպիսի մոտեցումներ կամ մեթոդներ է պատրաստվում կիրառել դրանց լուծման համար, ինչպիսի իրավիճակ կամ գլոբալ արդյունքներ է ակնկալում դրանց լուծման արդյունքում)</p>	<p>ԵՊՀ-ն մեծ կարևորություն է տալիս իր գիտակրթական գործունեությունն ապահովող ենթակառուցվածքների և ռեսուրսների շարունակական բարելավմանն ու զարգացմանը, ինչով և պայմանավորված է ուսումնառությանը և հետազոտությանը նպաստող պատշաճ միջավայրի գոյությունը: ԵՊՀ-ն կարևորում է եղած հնարավորությունների օպտիմալ օգտագործումը, այդ իսկ պատճառով խնդիր է դրել, մասնավորապես, վերհանել կրթական և հետազոտական ծրագրերի ռեսուրսային կարիքները և պլանավորել ու իրականացնել այդ կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումներ: Ենթակառուցվածքների զարգացման տեսանկյունից առաջնահերթ յնչանակություն ունի փաստաթղթաշրջանառության ամբողջական էլեկտրոնային համակարգի ներդրումը, ինչին պետք է հասնել, մասնավորապես, տեղեկատվության ավտոմատացված մշակման և կառավարման ծրագրային փաթեթի ստեղծման և համակարգի օգտագործողների վերապատրաստումների միջոցով: Որպես վերջնարդյունք՝ ակնկալվում է ունենալ ուսումնառության ռեսուրսների գնահատման համակարգ, ուսումնառության ռեսուրսների և ուսանողների օժանդակության ծառայությունների բարելավման գործող ծրագիր, վարչական գործընթացների ավտոմատացման ու էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգեր:</p>
--	---

Փորձագիտական երաշխավորություն	Խնդրի ընթացիկ վիճակը	Բարելավող գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական և ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
1. Ներդնել փաստաթղթաշրջանառության ամբողջական էլեկտրոնային համակարգ, որը կհամապատասխանի տեղեկատվության կառավարման քաղաքականությանը և	Համալսարանի փաստաթղթաշրջանառության մի շարք գործընթացներ ներկայումս իրականացվում են էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Մալբերի» համակարգը, որ կոչված է ամբողջացնելու փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը	1. Ուսանողական միջոցառումների, կայքի կառավարման և այլ վարչական գործընթացների ավտոմատացման համակարգերի ստեղծում:	2013/14 ուստ. II կիս.	Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան	Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին, ԵՊՀ բյուջե	Համակարգի շահագործում
		2. Ներքին վարչական գործընթացների	2013/14	Ուսանողների,	Ռեկտորատ	Զեկույց և

ընթացակարգերին:	ԵՊՀ-ում, գտնվում է ներդրման փուլում: Համակարգի ներդրման ուղղությամբ տարվել են որոշ աշխատանքներ. վերանայվել է համալսարանի գործավարության կանոնակարգը, առանձնացվել է համապատասխան սերվեր, իրականացվել են վարչական աշխատողների մի մասի վերապատրաստումներ:	ուսումնասիրում և համապատասխան օպտիմալացման երաշխավորությունների ներկայացում:	ուստ. II կիս.	շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան		երաշխավորություններ
		3. Գործավարության կազմակերպման ընթացակարգերի վերանայում և համապատասխան կանոնակարգերի ընդունում:	2014/15 ուստ. I կիս.	Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան	Ռեկտորատ Գիտական խորհուրդ	Նոր կանոնակարգեր և ընթացակարգեր
		4. Ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը:	2014/15 ուստ. II կիս.	ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան	Ռեկտորատ ԵՊՀ բյուջե	Գործող «Մալբրի» համակարգ
2. Վերլուծել՝ որքանով են առկա ռեսուրսներն ապահովում անհրաժեշտ միջավայր՝ ռազմավարական պլանի նպատակներից բխող կրթական գործունեությունն իրականացնելու համար:	Կրթական գործընթացն ապահովող ռեսուրսների գնահատման գործող մեխանիզմներից են ԵՊՀ շրջանավարտների բավարարվածության ամենամյա հարցումները: Մշակվել են ուսումնառության ռեսուրսների և ուսանողների օժանդակության ծառայությունների գնահատման ընթացակարգային չափանիշներ,	5. Գործադրել ուսումնառության ռեսուրսների և ուսանողների օժանդակության ծառայությունների գնահատման ընթացակարգը՝ համապատասխան չափանիշներով:	2013/14 ուստ. II կիս. - 2014/15 ուստ. I կիս.	ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Բուդաղյան	ԵՊՀ որակի ապահովման կենտրոն (ՈԱԿ) Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին	Ռեսուրսների գնահատման գործող համակարգ

	<p>ինչպես նաև այդ ռեսուրսների զարգացման միջոցառումների ծրագիր (2013թ.):</p> <p>ԵՊՀ-ում գործում է ուսումնական լաբորատորիաների արդիականացման ծրագիր:</p>	<p>6. Մշակել ուսումնառության ռեսուրսների և ուսանողների օժանդակության ծառայությունների բարելավման ծրագիր:</p>	<p>2014/15 ուստ. II կիս. - 2015/16 ուստ. I կիս.</p>	<p>ԵՊՀ ՈԱԿ տնօրեն Ա. Ս. Բուդաղյան</p>	<p>ԵՊՀ ՈԱԿ Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին</p> <p>Ֆակուլտետներ</p>	<p>Բարելավման միջոցառումների ծրագրի գործադրում</p>
<p>3. Ստեղծել առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների և անձնակազմի համար անհրաժեշտ պայմաններ:</p>	<p><i>Տե՛ս 4-րդ չափանիշի 1-ին խորհրդատվական երաշխավորության բարելավող միջոցառումների գործողությունը:</i></p>					

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

<p style="text-align: center;">Խնդրի ընկալումը</p> <p>(համառոտ ներկայացնել, թե ինչպես է ԵՊՀ-ն ընկալում տվյալ չափանիշի շրջանակներում բարձրացված խնդիրների էությունը, ինչպիսի մոտեցումներ կամ մեթոդներ է պատրաստվում կիրառել դրանց լուծման համար, ինչպիսի իրավիճակ կամ գլոբալ արդյունքներ է ակնկալում դրանց լուծման արդյունքում)</p>	<p>Հաշվետվողականության արդյունավետ համակարգը, գործընթացների թափանցիկության ապահովումն ու հետադարձ կապի կայուն և արդյունավետ միջոցները մեկ միասնական համակարգի՝ հասարակական պատասխանատվության, իրար փոխլրացնող կարևորագույն տարրերից են: Հաշվետվողականության համակարգն ապահովում է ինչպես կատարված աշխատանքի գնահատումն ու նոր աշխատանքների պլանավորումը, այնպես էլ արդյունավետ գործիք է թափանցիկության ապահովման և հետադարձ կապի համար: Թափանցիկության ապահովումն ընդգրկում է բազմաթիվ ոլորտներ՝ ինչպես, ավանդաբար ընկալվող, հանրության հետ կապերի ոլորտը, այնպես էլ՝ ներհամալսարանական մի շարք գործընթացների հրապարակայնությունը (ուսումնական աշխատանքների կազմակերպում, մարդկային ռեսուրսների կառավարում, պետական գնումներ և այլն): ԵՊՀ-ում գործող հաշվետվողականության համակարգի արդյունավետության ուսումնասիրումը կբարելավի հաշվետվողականության գործող համակարգը, կբարձրացնի դրա արդյունավետությունը: Որպես վերջնարդյունք՝ ԵՊՀ-ն նախատեսում է ներդնել ԵՊՀ գործունեության թափանցիկությունն ապահովող համալիր մեխանիզմներ և ընթացակարգեր, ինչպես նաև հասարակության լայն շերտերի հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:</p>
---	---

Փորձագիտական երաշխավորություն	Խնդրի ընթացիկ վիճակը	Բարելավող գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական և ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
1. Գնահատել հաշվետվողական համակարգի արդյունավետությունը:	Համալսարանում գործում է հաշվետվողականության երկմակարդակ համակարգ (ստորաբաժանումների և համահամալսարանական մակարդակներ):	1. Ուսումնասիրել և գնահատել ԵՊՀ-ում գործող հաշվետվողականության համակարգի արդյունավետությունը:	2014/15 ուստ. II կիս.	Հասարակայնության հետ կապերի և լրատվության պետ Կ. Գրիգորյան	ԵՊՀ Գ.Խ Ժամանակավոր հանձնաժողով Հասարակայնության հետ կապերի և լրատվ. վարչություն (ՀԿԼՎ)	Վերլուծական զեկույց

	<p>Գործընթացի արդյունքում ձևավորվում են ուսումնական տարվա ԵՊՀ գործունեության հաշվետվությունը (մշակվում է 1995-96 ուստարվանից) և համախմբված ֆինանսական հաշվետվությունները: ԵՊՀ-ում առկա համակարգն ապահովում է ինչպես ներքին հաշվետվողականությունը, այնպես էլ արտաքին հաշվետվողականությունը:</p>	<p>2. Գնահատման արդյունքների հիման վրա վերանայել հաշվետվողականության գործող համակարգը:</p>	<p>2015/16 ուստ. I կիս.</p>	<p>Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան</p> <p>Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ Կ. Գրիգորյան</p>	<p>ԵՊՀ ԳԽ Ժամանակավոր հանձնաժողով</p> <p>ՀԿԼՎ</p>	<p>ԵՊՀ հաշվետվողականության կարգ</p>
<p>2. Մշակել թափանցիկության ապահովման քաղաքականություն:</p>	<p>ԵՊՀ-ն որդեգրել է գործունեության բոլոր ոլորտներում թափանցիկության ապահովման գործելաոճը: ԵՊՀ-ում գործում է Հասարակայնության</p>	<p>1. Մշակել և իրականացնել ԵՊՀ գործունեության թափանցիկությունն ապահովող համալիր մեխանիզմների և ընթացակարգերի ներդրման ծրագիր:</p>	<p>2016/17 ուստ. II կիս.</p>	<p>Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյան</p>	<p>ՀԿԼՎ</p>	<p>Մշակված ծրագիր</p> <p>Արտաքին շահեկիցների արձագանք</p>

	<p>հետ կապերի և լրատվության վարչությունը: ԵՊՀ համացանցային ռեսուրսների զարգացումը լուրջ խթան է հանդիսանում թափանցիկության ապահովման համար: 2012 թ. ԵՊՀ ԳԽ կողմից ընդունվել է «ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգը»:</p>					
<p>3. Վերլուծել հասարակության լայն շերտերից հետադարձ կապի հավաքման գործող մեխանիզմների արդյունավետությունը:</p>	<p>Որպես հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի ապահովման արդյունավետ միջոց՝ նախատեսվում է համացանցը: ԵՊՀ-ում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքներից են նաև հասարակական կարծիքի ուսումնասիրման տարբեր հարցումները:</p>	<p>1. Ուսումնասիրել հետադարձ կապի ԵՊՀ ում առկա մեխանիզմներն ու գործիքները, ի հայտ բերել խնդիրները:</p> <p>2. Մշակել և իրականացնել հասարակության լայն շերտերի հետ հետադարձ կապի մեխանիզմների և գործիքների զարգացման ծրագիր:</p>	<p>2015/16 ուստ. I կիս.</p> <p>2015/16 ուստ. II կիս.</p>	<p>Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ Կ. Գրիգորյան</p> <p>Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ Կ. Գրիգորյան</p>	<p>ՀԿԼՎ</p> <p>ՀԿԼՎ</p>	<p>Վերլուծական զեկույց</p> <p>Արդյունավետ գործող ծրագիր Հետադարձ կապի արդիականացված, նոր մեխանիզմների առկայություն</p>

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ IX. ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

<p style="text-align: center;">Խնդրի ընկալումը</p> <p>(համառոտ ներկայացնել, թե ինչպես է ԵՊՀ-ն ընկալում տվյալ չափանիշի շրջանակներում բարձրացված խնդիրների էությունը, ինչպիսի մոտեցումներ կամ մեթոդներ է պատրաստվում կիրառել դրանց լուծման համար, ինչպիսի իրավիճակ կամ գլոբալ արդյունքներ է ակնկալում դրանց լուծման արդյունքում)</p>	<p>ԵՊՀ-ն կարևորում է միջազգայնացման ուղղությամբ նպատակաուղղված և համալիր գործողությունների իրականացումը: Այդ նպատակով, ԵՊՀ-ն պատրաստվում է ընդունել 2015-2020 թթ. միջազգայնացման ռազմավարություն, դրա իրականացման ժամանակացույց պլան և իրականացնել միջազգայնացման գործողությունների մշտադիտարկում: Պետք է կանոնակարգվեն Միջազգային համագործակցության վարչության (ՄՀՎ) գործառնությունները, ներդրվեն նրա աշխատողների և պաշտոնների անձնագրի, կանոնավոր վերապատրաստման, ատեստավորման համակարգերը: Պետք է ներդրվի միջազգային ծրագրերի՝ ԵՊՀ առաքելությանն ու ռազմավարական նպատակների իրագործմանը նպաստելու գնահատման համակարգ, իրականացվեն միջազգայնացմանն ուղղված համալիր միջոցառումներ (անգլլալեզու կրթական ծրագրերի և մոդուլների թվի ավելացում, դասախոսների, վարչական աշխատողների, ուսանողների՝ անգլերենի իմացության, ինչպես նաև միջազգային համագործակցության ծրագրերի մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում): Միջազգայնացման ուղղությամբ առաջընթացի գնահատման, քայլերի ճշգրտման նպատակով՝ պետք է պարբերաբար իրականացվի բենչմարքինգ: Որպես վերջնարդյունք՝ ակնալվում է ունենալ միջազգայնացման ռազմավարություն՝ իր ժամանակացույց-պլանով, միջազգային ծրագրերի գնահատման ցուցիչների լրակազմ, առավել արդյունավետ գործառնող ՄՀՎ, միջազգայնացման ուղղությամբ ԵՊՀ ստորաբաժանումների միջև առավել սերտ համագործակցություն, անգլլալեզու կրթական նոր ծրագրեր և մոդուլներ, միջազգային համագործակցության նոր ծրագրեր, անգլերենի ավելի լավ իմացությամբ դասախոսական և վարչական կազմ, ուսանողներ:</p>
---	--

Փորձագիտական երաշխավորություն	Խնդրի ընթացիկ վիճակը	Բարելավող գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական և ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
1. Մշակել միջազգայնացման ամբողջական ռազմավարություն:	ԵՊՀ-ն ունի 2009-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր, որում սահմանված ռազմավարական նպատակներից մեկը վերաբերում է միջազգայնացմանը: Սակայն	1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ արտասահմանյան բուհերի միջազգայնացման ռազմավարությունների ուսումնասիրության նպատակով: Հստակեցնել ԵՊՀ միջազգայնացման շրջանակները, ուղղություններն ու հիմնախնդիրները: Իրականացնել	2013/14 ուստ. II կիս.- 2014/15 ուստ. I կիս.	Միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Մարգարով	Միջազգային համագործակցության վարչություն Գիտակազմակերպական բաժին (ԳԿԲ)	Համեմատական վերլուծության իրականացում Վերլուծական զեկույց

	կարիք կա մշակելու և ընդունելու միջազգայնացման համապարփակ ռազմավարություն:	ինքնագնահատում՝ դրա հիման վրա առանձնացնելով միջազգայնացման առաջնահերթ ուղղությունները:			Ֆակուլտետներ Ուսանողական խորհուրդ (ՈւԽ)	
	2. Մշակել ԵՊՀ 2015-2019 թթ. միջազգայնացման ռազմավարություն (ՄՌ):	2014/15 ուստ. II կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	ՄՀՎ Ֆակուլտետներ PICASA ծրագիր	ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված ՄՌ	
	3. Մշակել ԵՊՀ ՄՌ իրականացման ժամանակացույց-պլան:	2015/16 ուստ. I կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	ՄՀՎ Ֆակուլտետներ	ԵՊՀ ՄՌ իրականացման՝ ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված ժամանակացույց-պլան	
	4. Մշակել ՄՌ իրականացման գործողությունների առաջընթացի ցուցիչներ՝ ՄՌ-ի իրականացման մշտադիտարկման նպատակով:	2015/16 ուստ. II կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	ՄՀՎ Ֆակուլտետներ	ՄՌ իրականացման գնահատման ցուցիչների հաստատված լրակազմ	
	5. ԵՊՀ ՄՌ իրականացման մշտադիտարկում:	2016/17 ուստ. II կիս.- 2019/20 ուստ. II կիս., շարունակական	Միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Մարգարով	ՄՀՎ	Մշտադիտարկման արդյունքների մասին ամենամյա հաշվետվություններ Բարելավման միջոցառումների տարեկան ծրագրեր	
2. Մշակել մի-	ՄՀՎ գործառնությունը	1.Ուսումնասիրել արտասահմանյան	2014/15	Գիտական քաղա-	ՄՀՎ	Ուսումնասիրության

<p>ջազգային կապերի վարչության գործառնական պլաններ, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ և որդեգրել կենտրոնի առաքելությանը համապատասխան աշխատելառձ:</p>	<p>հիմնված է վարչության կանոնադրության վրա: Մոնիթորինգը և գնահատումն իրականացվում են ՄՀՎ-ի ռեկտորատին ներկայացվող պարբերական զեկույցների և տարեկան հաշվետվության հիման վրա: ՄՀՎ աշխատողների որակավորման բարձրացումն իրականացվում է միջազգային ծրագրերի (Տեմպուս, Էրազմուս) շրջանակներում պարբերական վերապատրաստման միջոցով: Կատարվել է աշխատողների վարձատրման ընթացակարգերի փոփոխություն՝ աշխատողի մոտիվացիայի բարձրացման նպատակով:</p>	<p>առաջատար բուհերի միջազգային կապերի կառույցների փորձը՝ գործողությունների իրականացման մոնիթորինգի հարցերում:</p>	<p>ուստ. I կիս.</p>	<p>քականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան</p>	<p>Ֆակուլտետներ</p>	<p>արդյունքում ստացված արդյունքների վերաբերյալ զեկույց</p>
		<p>2.Վերանայել ՄՀՎ ստորաբաժանումների գործառնություններն ու զերակայությունները՝ գործառնության արդյունավետության բարձրացման նպատակով և դրանք ամրագրել վարչության կանոնադրության մեջ:</p>	<p>2014/15 ուստ. II կիս.</p>	<p>Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան</p>	<p>ՄՀՎ</p> <p>Ֆակուլտետներ</p>	<p>ՄՀՎ՝ ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված նոր կանոնադրություն</p>
		<p>3.Մշակել ՄՀՎ աշխատակազմի գործունեության արդյունավետության գնահատման ցուցիչների լրակազմ:</p>	<p>2015/16 ուստ. I կիս.</p>	<p>Միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Մարգարով</p>	<p>ՄՀՎ</p> <p>Ֆակուլտետներ</p>	<p>Գործող ցուցիչների լրակազմ</p>
		<p>4.Մշակել և ներդնել ՄՀՎ ստորաբաժանումների աշխատողների պատոնների անձնագրի համակարգ:</p>	<p>2015/16 ուստ. II կիս.</p>	<p>Միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Մարգարով</p>	<p>ՄՀՎ</p> <p>Կադրերի բաժին (ԿԲ)</p> <p>Իրավաբանական բաժին (ԻԲ)</p>	<p>Նոր անձանց աշխատանքի ընդունումը նոր մշակված համակարգի հիման վրա</p>
		<p>5. Իրականացնել ՄՀՎ աշխատակիցների վերապատրաստում՝ օգտագործելով միջազգային գործող ծրագրերը, ներգրավելով արտասահմանյան գործընկեր բուհերի ներուժը, ինչպես նաև առցանց մեխանիզմները:</p>	<p>2015/16 ուստ.</p>	<p>Միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Մարգարով</p>	<p>ՄՀՎ</p> <p>Որակի ապահովման կենտրոն</p> <p>Տեմպուս, Պիկասս, Էրազմուս ծրագրերը</p> <p>ԵՊՀ հատկացրած</p>	<p>Վերապատրաստման կազմակերպում</p> <p>Վերապատրաստված աշխատակիցների թիվը</p>

					ռեսուրսներ	
		6. Իրականացնել աշխատողներիատեստավորում:	2016/17 ուստ. I կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	ՄՀՎ ԿԲ ԻԲ	ՄՀՎ աշխատակազմի ատեստավորման կազմակերպում Ատեստավորում անցածների թիվը
		7. Ուժեղացնել համագործակցությունը ՄՀՎ և ֆակուլտետների միջազգային կապերի գծով պատասխանատուների միջև՝ տեղեկատվության տարածման և առկա միջազգային ծրագրերի ուղղությամբ:	2014/15 ուստ. I կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	ՄՀՎ Ֆակուլտետներ	Միջազգայնացման ուղղությամբ ֆակուլտետների կողմից իրականացվող գործողությունները
3. Ուսումնասիրել ԵՊՀ առաքելության և ռազմավարական նպատակների իրականացմանը նպաստող գործողությունների արդյունավետությունը:	ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների միջոցով ուսումնասիրվում են համալսարանի գործողությունների բնութագրիչները և իրականացվում է գնահատում: ԵՊՀ-ում գործում է նաև նախագծերի հաշվետվությունների ներկայացման մեխանիզմը:	1. Մշակել չափանիշներ միջազգային ծրագրերի իրականացման ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունների համար՝ դրանց ԵՊՀ առաքելությանն ու ռազմավարական նպատակների իրականացմանը նպաստելու գնահատման համար:	2015/16 ուստ. II կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան	ՄՀՎ ԳԿԲ	Մշակված չափանիշների լրակազմ
4. Վերլուծել՝ ինչ ազդեցություն ունեն միջազգային ծրագրերը համալսարանի առաքելության և նպատակների		2. Միջազգային ծրագրերի մշակման ժամանակ առաջնահերթ ուշադրություն դարձնել դրանց նպատակների համապատասխանությանը ԵՊՀ առաքելությանն ու ռազմավարական նպատակներին:	2016/17 ուստ. I կիս.	Միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Մարգարով	ՄՀՎ Ֆակուլտետներ ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներ	ԵՊՀ առաքելությանն ու ռազմավարական նպատակներին համապատասխանող ծրագրերի թիվը
		3. Ստեղծել ԵՊՀ-ում գործող միջազգային ծրագրերի առցանց բազա:	2014/15 ուստ. I կիս.	Միջազգային համագործակցության վարչության պետ	ՄՀՎ Ֆակուլտետներ	Տվյալների բազա

տակների իրականացման վրա:				Ա. Մարգարով	ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներ ԵՊՀ բյուջե	
5. Բարելավել ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակազմի անգլերեն լեզվի իմացությունը:	Կրթական ծրագրերի շրջանակում ԵՊՀ ուսանողներն անցնում են անգլերեն՝ 3 կիսամյակ բակալավրիատում և 1 կիսամյակ մագիստրատուրայում, ասպիրանտուրայի ընդունելության համար անհրաժեշտ է TOEFL-ի համապատասխան միավոր: 2011 թ-ից իրականացվող որակավորման բարձրացման ծրագիրը նախատեսում է անգլերենի պարտադիր դասընթացներ դասախոսների համար: ԵՊՀ վարչական աշխատողների համար կանոնավոր կերպով կազմակերպվում են անգլերենի դասընթացներ:	1. Բարձրացնել ուսանողների անգլերենի իմացության պահանջները՝ կատարելագործելով բակալավրի կրթական ծրագրերում մասնագիտական անգլերենի առարկայական ծրագրերը:	2014/15 ուստ.	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան	Ուսումնամեթոդական վարչություն (ՈւՄՎ) Անգլերենի N1 և N2 ամբիոններ	Անգլերենի վերանայված առարկայական ծրագրեր Անգլերենի միջին գնահատականի բարձրացում և թեստավորման արդյունքում ավելի բարձր միջին գնահատականներ
		2. Շարունակել դասախոսների՝ անգլերենի վերապատրաստման դասընթացները:	2013/14 ուստ. II կիս. – 2019/20 ուստ. II կիս.	Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Աղասյան	Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն (ՀԼԿՎ) Անգլերենի N1 և N2 ամբիոններ Անգլիական բանասիրության ամբիոն	B1, B2, C1, C2 մակարդակով անգլերենի իմացությամբ դասախոսների թիվը Անգլերենով դասավանդողների թիվը
		3. Կանոնակարգել վարչական աշխատողների վերապատրաստման (այդ թվում՝ անգլերենի) դասընթացների իրականացումը:	2014/15 ուստ.	Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Աղասյան	ՀԼԿՎ Անգլերենի N1-N2 ամբիոններ	Վարչական աշխատողների կանոնակարգված վերապատրաստում

6. Բակլավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում մշակել մոդուլներ անգլերեն լեզվով:	ԵՊՀ-ում գործում է ամբողջությամբ անգլերենով անցկացվող մագիստրոսական մեկ ծրագիր՝ «Մարդու իրավունքներ և ժողովրդավարություն», իսկ որոշ ֆակուլտետներում դասավանդվում է անգլերեն՝ հատուկ նպատակների համար:	1. Ֆակուլտետներում ստեղծել աշխատանքային խմբեր, որոնք պետք է բակլավրիատի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար մշակեն և ներկայացնեն առնվազն 1 կրթական մոդուլ անգլերենով և մագիստրոսական յուրաքանչյուր կրթական ծրագրում 2 մոդուլ անգլերենով՝ ապահովելով նաև անհրաժեշտ ուսուցողական և դիդակտիկ նյութեր:	2015/16 ուստ. II կիս. – 2019/20 ուստ. II կիս.	Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյան	ՈւՄՎ Ֆակուլտետներ ԵՊՀ բյուջե	Անգլերենով մատուցվող դասընթացների թիվը
		2. Առանձնացնել թիրախային կրթական ծրագրեր՝ ամբողջությամբ անցվել են, որոնք կնպաստեն ԵՊՀ ռազմավարական նպատակների ու առաքելության իրականացմանը միջազգայնացման տեսանկյունից և կմեծացնեն արտերկրից եկող ուսանողների թիվը:	2015/16 ուստ. II կիս. - 2019/20 ուստ. II կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան	ՈւՄՎ ՄՀՎ ՈԱԿ Ֆակուլտետներ	5 տավա ընթացքում ԵՊՀ-ում ունենալ անգլերենով դասավանդվող 4 կրթական ծրագիր
		3. Ապահովել անգլալեզու կրթական ծրագրերի համապատասխան ծրագրային փաստաթղթերի, ուսումնամեթոդական գրականության և օժանդակ նյութերի առկայությունը, դրանց էլեկտրոնային տարբերակների տեղադրումը ԵՊՀ կայքում: Նախապատրաստել և հրատարակել օտարերկրյա ուսանողի ուսումնա-	2015/16 ուստ. II կիս. – 2019/20 ուստ. II կիս.	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան	ՈւՄՎ ՄՀՎ ՈԱԿ Ֆակուլտետներ ԵՊՀ բյուջե	ԵՊՀ կայքում տեղադրված համապատասխան նյութեր

		ռության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք, ինչպես նաև ԵՊՀ ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր՝ դրանք տարածելով պոտենցիալ դիմորդների շրջանում:				
		4. Օտարալեզու կրթական ծրագրերում ընդգրկված դասախոսական կազմի համար նախատեսել խրախուսման մեխանիզմներ, այդ թվում՝ սահմանելով աշխատանքի վարձատրման տարբերակված նորմատիվներ:	2015/16 ուստ. II կիս.	ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյան	ԵՊՀ հաշվապահություն ԵՊՀ բյուջե	Խրախուսման գործող մեխանիզմներ
7. Մեծացնել ուսանողների և աշխատակազմի շարժունությունը	Վերջին տարիների ընթացքում գրանցվել է ԵՊՀ ուսանողների և աշխատակազմի շարժունության անընդհատ ու դիմանիկ աճ՝ կապված միջազգային ծրագրերում ԵՊՀ-ի ընդգրկվածության աճի, ինչպես նաև ԵՊՀ ֆինանսական քաղաքականության հետ: ԵՊՀ-ում գործում են նաև Ռոստոկի համալսարանի և ԱՊՀ Ցանցային համալսարանի հետ համատեղ (Visual Computing) իրականաց-	1. Չարգացնել համագործակցությունն արտասահմանյան, այդ թվում՝ ԱՊՀ երկրների բուհերի հետ՝ միջմասնագիտական համատեղ մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի ստեղծման և որակավորման աստիճանների համատեղ շնորհման ուղղությամբ:	2014/15 ուստ. II կիս. – 2019/20 ուստ. II կիս.	Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյան Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան	ՄՀՎ ՈւՄՎ Ֆակուլտետներ ԵՊՀ բյուջե ՀՀ պետական ֆինանսավորում	Գործընկեր համալսարանների հետ համատեղ մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի թիվը
		2. Չարգացնել համագործակցությունը դրամաշնորհային կազմակերպությունների հետ:	2013/14 ուստ. II կիս. – 2019/20 ուստ. II կիս.	Միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Մարգարով	ՄՀՎ	Գործընկեր դրամաշնորհային կազմակերպությունների և դրամաշնորհային ծրագրերի թիվը

	վող կրկնակի դիպլոմով ծրագրեր:	3. Ուսանողների և աշխատակազմի շրջանում բարձրացնել շարժունության ծրագրերի մասին իրազեկվածության աստիճանը:	2014/15 ուստ.	Միջազգային համագործակության վարչության պետ Ա. Մարգարով	ՄՀՎ ՈւՄ	Իրազեկված ուսանողների և դասախոսների թիվը
		4. Ստեղծել «ԵՊՀ միջազգային կապերի աջակցության (կամ զարգացման)» վիբրտուալ պլատֆորմ՝ կազմված ՄՀՎ-ից, ֆակուլտետների միջազգային կապերի գծով պատասխանատուներից և միջազգային համագործակցության ծրագրերում ընդգրկված ուսանողներից, շրջանավարտներից, դասախոսներից ու գիտաշխատողներից՝ նպատակ ունենալով ցանցի միջոցով հավաքագրել, համակարգել և տարածել տեղեկություն միջազգային համագործակցության ծրագրերի մասին:	2014/15 ուստ. I կիս.	Միջազգային համագործակության վարչության պետ Ա. Մարգարով	ՄՀՎ ՈւՄ Ֆակուլտետներ ԵՊՀ բյուջե	Ցանցի առկայությունը և մասնակիցների թիվը
8. Իրականացնել միջազգային բենչմարքինգ ինստիտուցիոնալ մակարդակով: Լավ օրինակ կարող է հանդիսանալ կրթական մեթոդաբանական վարչության փորձը:	ԵՊՀ ՄՀՎ-ն իրականացրել է միջազգայնացման ոլորտի միանգամայա բենչմարքինգ 2009-2011թթ.:	1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ ընտրված արտասահմանյան բուհերի հետ համեմատության հիման վրա բենչմարքինգ իրականացնելու նպատակով և մշակել բենչմարքինգի ցուցիչների լրակազմը:	2014/15 ուստ.	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան	ՄՀՎ ՈԱԿ	Բենչմարքինգի համար առանձնացված բուհերը և բենչմարքինգի ցուցիչների լրակազմը
		2. Երկամյա պարբերականությամբ իրականացնել բենչմարքինգ:	2016/17 ուստ. I կիս. - 2019/20 ուստ. II կիս.	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան	ՄՀՎ ՈԱԿ	Բենչմարքինգի արդյունքների վերաբերյալ զեկույց

		3. Բենչմարքինգի արդյունքների հիման վրա կատարել անհրաժեշտ գործողությունների գնահատում և մշակել բարելավման գործողությունների ծրագիր:	2018/19 ուստ. I կիս.	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան	ՄՀՎ ՈԱԿ	Բարելավման գործողությունների ծրագիր
--	--	--	----------------------------	--	------------	-------------------------------------

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

<p align="center">Խնդրի ընկալումը</p> <p>(համառոտ ներկայացնել, թե ինչպես է ԵՊՀ-ն ընկալում սով- յալ չափանիշի շրջանակներում բարձրագույն խնդիրների էությունը, ինչպիսի մոտեցումներ կամ մեթոդներ է պատ- րաստվում կիրառել դրանց լուծման համար, ինչպիսի իրա- վիճակ կամ գլոբալ արդյունքներ է ակնկալում դրանց լուծման արդյունքում)</p>	<p>Փորձագիտական խմբի կողմից արված երաշխավորություններն ըստ էության առնչվում են ԵՊՀ-ում որակի մշա- կույթի զարգացման հիմնախնդրին, ինչը որակի հավաստման և շարունակական բարելավման հիմնական գրավա- կանն է ԵՊՀ գործունեության բոլոր ոլորտներում (կառավարում, վարչարարություն, կրթական և գիտական գործու- նեություն և այլն) և մակարդակներում՝ համալսարանի, ֆակուլտետի, ամբիոնի, կրթական ծրագրի և ամենակարևո- րը՝ յուրաքանչյուր դասախոսի: Համալսարանում որակի մշակույթի սերմանման և հետագա զարգացման կարևորա- գույն բաղադրիչը ՊԻՄԲ շրջափուլային գործընթացների ներմուծումը և գործադրումն է ԵՊՀ գործունեության բոլոր կարևորագույն ոլորտներում և մակարդակներում՝ լայնորեն ներգրավելով հիմնական դերակատարներին (դասա- խոսական և վարչական կազմ, ուսանողներ և շրջանավարտներ, հիմնական գործատուներ և այլն): Այն համալսա- րանական հանրության շրջանում կձևավորի որակի նկատմամբ հոգածություն և շարունակական բարելավում իրա- կանացնելու ներքին պահանջումը:</p>
--	---

Փորձագիտական երաշխավորություն	Խնդրի ընթացիկ վիճակը	Բարելավող գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական և ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձևաչափեր
1. Իջևանի մասնաճյուղն ավելի ուղղակիորեն ներգրավել համալսարանի ներքին որակի ապահովման համակարգում՝ ամբողջովին հաշվի առնելով մասնաճյուղի ներքին որակի ապահովման համակարգի արդյունքները:	ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի (ՈԱԿ) և Իջևանի մասնաճյուղի միջև գործում է սերտ համագործակցություն որակի ներքին ապահովման հարցերում, մասնավորապես՝ ԵՊՀ-ում մշակված ՈԱ մեխանիզմները և գործընթացներն ամբողջությամբ փոխանց-	1. ԵՊՀ ԳԻՄ Որակի ապահովման մշտական հանձնաժողովի կազմում ընդգրկել մասնաճյուղի մեկ ներկայացուցչի (տնօրենին): 2. Ստեղծել ԵՊՀ ՈԱ կենտրոնի և Իջևանի մասնաճյուղի ՈԱ և վերահսկման բաժնի համագործակցության խորհուրդ՝ հորիզոնական կառուցվածք կապերի հաստատման և լավագույն փորձի փոխանակման ու տարածման նպատակով:	2013/14 ուստ. II կիս.	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյան	ԵՊՀ ԳԻՄ	ԳԻՄ ՈԱ համալրված հանձնաժողով
			2014/15 ուստ. I կիս.	ՈԱ կենտրոնի տնօրեն Ա. Բուդաղյան	ԵՊՀ և Իջևանի մասնաճյուղի ՈԱ կառույցների անձնակազմ	ՈԱ գործող համագործակցության խորհուրդ

<p>2. Մշակել համընդգրկուն որակի ապահովման ձեռնարկ:</p>	<p>վում են մասնաճյուղին: Փորձագիտական այցից հետո ընկած ժամանակահատվածում մշակվել է «ԵՊՀ որակի ապահովման և շարունակական բարելավման ձեռնարկը» (486 էջ), որը բաղկացած է հետևյալ բաժիններից. Ներածություն, ՈԱ տերմինարան, Բաժին I. Որակի ներքին ապահովումը. 1. ԵՊՀ ՈԱ քաղաքականությունը, 2. Կրթական ծրագրերի ՈԱ-ը և շարունակական բարելավումը, 3. Ուսանողների արժանահավատ գնահատման կազմակերպումը, 4. Դասախոսական կազմի ՈԱ-ն և շարունակական բարելավումը, 5. Ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցու-</p>	<p>1. Հաստատել և գործադրել «ԵՊՀ որակի ապահովման և շարունակական բարելավման ձեռնարկը»:</p>	<p>2014/15 ուստ. II կիս.</p>	<p>ՈԱ կենտրոնի տնօրեն Ա. Բուդաղյան</p>	<p>ՈԱ կենտրոն ԵՊՀ ԳԻՍ ՈԱ մշտական հանձնաժողով</p>	<p>ԵՊՀ ԳԻՍ կողմից հաստատված Որակի ապահովման ձեռնարկ</p>
--	---	--	--------------------------------------	--	--	---

	<p>թյան ծառայությունների ՈԱ-ն,</p> <p>6. Ուսանողների և այլ շահեկիցների հետ հետադարձ կապի ապահովումը,</p> <p>7. Համալսարանի և նրա կրթական ծրագրերի ինքնագնահատումը:</p> <p>Բաժին II. Որակի արտաքին ապահովումը.</p> <p>1. Ինստիտուցիոնալ հավատարմագրման պետական չափանիշները,</p> <p>2. Ծրագրային հավատարմագրման պետական չափանիշները,</p> <p>3. Ինստիտուցիոնալ հավատարմագրման կարգը,</p> <p>4. Ծրագրային հավատարմագրման կարգը:</p> <p>Հավելվածներ:</p>					
3. ԵՊՀ կառավարման բոլոր մակարդակ-	Համալսարանի մակարդակում ՊԻՄԲ շրջա-	1. Գործադրել ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման նոր կարգը:	2013/14 ուստ. II	ՈԱ կենտրոնի տնօրեն	ՈԱ կենտրոն Ֆակուլտետ-	Գործող ընթացակարգ

ներում փակել ՊԻՄԲ շրջափուլը:	փուլային գործընթացը ներդրվել է 2009 թ-ից ռազմավարական պլանավորման գործընթացի ներմուծման և ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ՌԾ-ի ընդունման հետ կապված, որի գնահատման և բարելավման փուլերը դեռևս ավարտված չեն: ԵՊՀ-ում ներմուծված է ինստիտուցիոնալ ինքնագնահատման և շարունակական բարելավման գործընթաց: Ավելի ցածր մակարդակներում ՊԻՄԲ գործընթացի գործադրման նպատակով մշակվել են դասախոսական կազմի գործունեության արդյունավետության գնահատման, կրթական ծրագրի մշակման, ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման ընթացակարգերը, որոնք պետք է ներդրվեն 2014/15		կիս.	Ա. Բուդաղյան	ներ	
		2. Գործադրել ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման նոր կարգը:	2014/15 ուստ. I կիս.	ՈԱ կենտրոնի տնօրեն Ա. Բուդաղյան	ՈԱ կենտրոն Ֆակուլտետներ	Գործող ընթացակարգ
		3. Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման նոր չափանիշները և ընթացակարգը:	2014/15 ուստ. II կիս.	ՈԱ կենտրոնի տնօրեն Ա. Բուդաղյան	ՈԱ կենտրոն Ֆակուլտետներ	Գործող ընթացակարգ
		4. ԵՊՀ բոլոր ուսումնական ստորաբաժանումներում (ֆակուլտետ, կենտրոն) և հիմնական վարչական կառույցներում (գրադարան, ՈԱԿ, ՈԻՄՎ, ՄՀԿՎ, ՀԼԿՎ, ՄՀՎ, ՀԿԼՎ, ՏՀՍԶՎ, ՇԿԿ, ԳԿԲ, ԱԴԲ և ՈԻՏԱԲ) ներդնել երկարաժամկետ (հնգամյա) ռազմավարական պլանավորման գործընթաց համապատասխան SWOT վերլուծությունների կատարմամբ:	2015/16 ուստ. II կիս.	Ռեկտոր Ա. Սիմոնյան	Ստորաբաժանումների ղեկավարներ և ռազմավարական պլանավորման հանձնախմբեր	ԵՊՀ 21 ուսումնական և 12 վարչական ստորաբաժանումների SWOT-ներ
		5. Կազմել ուսումնական ստորաբաժանումների և հիմնական վարչական կառույցների զարգացման ռազմավարական ծրագրերը 2017-2020 ուստարիների համար և ընդունել իրականացման ժամանակացույց-պլաններ (Պ-Ի շրջափուլ):	2016/17 ուստ. I կիս.	Ռեկտոր Ա. Սիմոնյան	Ստորաբաժանումների ղեկավարներ և ռազմավարական պլանավորման հանձնախմբեր	ԵՊՀ ԳԽ կողմից հստատված 33 կառույցների ռազմավարական ծրագրեր
		6. ԵՊՀ բոլոր ուսումնական ստորաբաժանումներում և հիմնական վարչական կառույցներում ներդնել պարբերական (հնգամյա կտրվածքով)	2018/19 ուստ.	Ռեկտոր Ա. Սիմոնյան	ՈԱ կենտրոն	ԵՊՀ 21 ուսումնական և 12 վարչա-

	ուստարվանից:	ինքնագնահատման և հետամուտ գործընթացներ՝ շարունակական բարելավում ապահովելու նպատակով (Մ-Բ շրջափուլ):			Ֆակուլտետներ Վարչական կառույցներ	կան ստորաբաժանումների ինքնագնահատման զեկույցներ և բարելավման գործողությունների ծրագրեր
		7. ԵՊՀ-ում ներդնել հնգամյա պարբերականությամբ արտաքին գնահատման (աուդիտի) ինստիտուցիոնալ գործընթաց, որպես արտաքին գնահատողներ հրավիրելով եվրոպական հեղինակավոր կառույցների (օր., EUA, ՈԱ եվրոպական ռեգիստրում գրանցված գործակալություններ և այլն):	2016/17 ուստ.	Ռեկտոր Ա. Սիմոնյան	ՈԱ կենտրոն ԵՊՀ բյուջե Արտաքին աղբյուրներ	Արտաքին գնահատման (աուդիտի) զեկույց՝ համապատասխան բարելավող երաշխավորություններով
4. SWOT վերլուծություններում ներառել նաև հնարավորություններ և ռիսկեր բաժինները և ցույց տալ՝ ինչպես ռիսկերը կարող են հնարավորություն դառնալ և հակառակը:	SWOT վերլուծության մեթոդը ԵՊՀ-ում կիրառվել է դեռևս 2008 թ-ից՝ ԵՊՀ 2010-14 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը մշակելուց առաջ ներքին և արտաքին միջավայրային վերլուծություն կատարելիս:	1. Նախաձեռնել և իրականացնել SWOT վերլուծություններ 3-րդ երաշխավորության ուղղությամբ պլանավորված 2-րդ, 4-րդ և 6-րդ գործողություններում:	Տե՛ս 3-րդ երաշխավորության 2, 4 և 6 գործողությունները	Ռեկտոր Ա. Սիմոնյան	ՈԱ կենտրոն ԵՊՀ բյուջե Արտաքին աղբյուրներ	SWOT վերլուծությունների առկայություն 2, 4 և 6 գործողությունների արդյունքներում